

նը, որուն յաջորդած է Բիրզալէմեան Ղեւոնդ առուղ վարդապետը, միջոց մը նաեւ հիւրաբար Տէր Յովհաննէս աւագ քահանայ Մկրրեան՝ ապա Եսայի վ. Աստուածատուրեան էջմիածնականը, որուն հետ ոմանք հակառակած ալ են և ինք գարշելով՝ Լոնտրա անցած ու առանձին մատուռ մը հաստատած է հոն՝ պաշտպանութեամբն կարծենք՝ նշանաւոր Աղանուրեանց և Սէթ-Աբգարեանց: Ապա Սուքիաս վ. Պարոնեան պրուսացի՝ նախկին Մխիթարեանը, ապա Տ. Թորոս վ. Զուղայեցի, որ բաւական ատեն հրատարակեց ալ հոն Հայ եկեղեցի անունով պաղարիւն հանդէս մը, ապա սակաւօրեայ քահանայ մը զմիւռնացի, ապա՝ մեր օրերը (1907) Տ. Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեան կ. Պոլսեցի, երբեմն առաջնորդն Հայոց Եւրոպայի:

Այսպէս՝ հետզհետէ լաւագոյն ձեւերով և փորձերով հաստատեալ Մանչէսթըրի հայ վաճառական գաղթականութիւնն՝ հին հոլանտական Ամսդէրտամի գաղթականութեան նման՝ սկսած է աճիլ և զօրանալ կայուն, համերաշխ, եկեղեցացեալ կալուածի մը վրայ, վաճառական գործունէութեանց մէջ Ամսդէրտամէն գերազանց, բայց տպագրութեանց և այլի կողմէն՝ կարծենք՝ բաւական ընդհատ անկէ: Տեղը չէ՝ քննել հոս բուն պատճառներն այս տարբերութեան, որոնց գլխաւորը կը թուի հին Հայոց կրօնական ջերմ ոգիին և նախնեաց հետեւողութեան ու սիրելութեան նուազումը նոր Հայերուն մէջ, իրենց հովիւներուն թուլութենէ՛ն ապիկարութենէ՛ն կամ ապհեղինակութենէ՛ն՝ չենք կրնար գիտնալ:

---